

ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՈՒԺԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄՊԱՌՆԱԼԻՔԸ, ՈՐՊԵՍ  
ՀԱՅ-ԱՂԻՐԲԵԶԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ  
ԼՐԱՑՈՒՑԻՉ ԽԹԱՆ\*

Յուրաքանչյուր կոնֆլիկտի լուծման ուժային տարբերակը համարվում է այդ կոնֆլիկտի պոտենցիալ այլընտրանքային լուծումներից մեկը: Սակայն ուժային լուծման տարբերակը, ավելի քան լուծման մյուս տարբերակները, ունի բազմակողմանի և կշռադատված հիմնավորման կարիք մինչև այն պահը, քանի դեռ նրան չի տրվել հնարավոր լուծման միակ տարբերակի նախապատվությունը: Ռազմական լուծումները չեն կարող բնութագրվել ոչ իրենց հումանիստական բնույթով և ոչ էլ արդարացիությամբ:

Որպես ռազմական, ուժային ցանկացած լուծման դեմ (զավթողական, ազգային ազատագրական և այլն) ուղղված ծանրակշիռ փաստարկ, որը ակնհայտ է և անժխտելի մարդկության համար, պետք է նշել մարդկային և նյութական անդառնալի կորուստների փաստը: Բացի զինվորների կորստից, ոչ մի պատերազմ զերծ չի մնում խաղաղ բնակչության շրջանում զոհերից: Իսկ բնակչությանը միայն արկերից ու սովից չէ, որ մահ է սպառնում: Հարյուր հազարավոր փախստականների ու արտաքսվածների կոտրված ճակատագրերն ու կյանքերը դրա ապացույցն են:

Լեռնային Ղարաբաղի պատերազմում երկու կողմերը տվել են մոտ 30.000 զոհ: Չնայած, որ 1994թ. մայիսին Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի միջև Բիշքեքում ստորագրված զինադադարը պահպանվում է մինչ օրս, այնուամենայնիվ երկուստեք զինվորները զոհվում են դիպուկորդների կրակոցներից և ականների պայթյուններից: Համարվում է, որ Լեռնային Ղարաբաղի ռազմաճակատային գոտիներում տեղադրված են մոտ 50.000 հակահետևակային ականներ:<sup>1</sup>

\* Հոդվածի անգլերեն տարբերակը ներկայացվել է «Կոնֆլիկտների կանխարգելման և նախնական զգուշացման եվրոպական կենտրոնի» (CPEW) հետ համագործակցության շրջանակներում և ընդունվել է վերջինիս կողմից:

<sup>1</sup> Anthony Richter, "Frozen Hostility" Warreport, London, September 1996.

Ինչ վերաբերում է փախստականներին, ապա դրանց թիվը հայկական կողմից հասնում է 350.000-ի: Նրանք հիմնականում Ադրբեջանում (Բաքու, Սումգայիթ և այլ քաղաքներ, ինչպես նաև ԼՂ կորցրած մի հատվածի՝ Շահում-յանի շրջան), բնակված հայերն են, որոնք արտաքսվել են՝ կորցնելով իրենց տունն ու ունեցվածքը և նրանց գերակշիռ մասը հաստատվել է Հայաստանում: Պատերազմի սարսափները տեսած այս մարդկանց և ընդհանրապես հասարակության համար նոր պատերազմի վտանգը նոր ցնցումների պատճառ է հանդիսանում: Իսկ նման շահարկումները չեն դադարում գինադադարի կնքման պահից սկսած: Եթե շահարկումները հնարավոր են կոնֆլիկտին մասնակից երկրների որոշակի խմբերի կամ ուժերի կողմից, ապա ուղղակի ռազմական ուժի սպառնալիքը՝ տվյալ դեպքում միայն Բաքվի կողմից անթույլատրելի է և անմիջականորեն հարվածում է խնդրի խաղաղ կարգավորմանն ուղղված ջանքերին: Ավելին, այն կարող է նոր ճգնաժամերի առաջացման պատճառ հանդիսանալ, որոնք հակասում են տարածաշրջանում տևական խաղաղության հաստատմանը, կայունության, համագործակցության և երկխոսության մթնոլորտի կայացմանը:

Բաքվի կողմից հնչող ռազմատենչ հայտարարությունները փորձենք մեկնաբանել երեք կարևոր մոտեցումներից ելնելով:

1. Խնդրի լուծման ուժային տարբերակին դիմելը, այն է ուղղակի ուժի կիրառումը և անգամ ուժի կիրառման սպառնալիքը, խիստ ձևով կապված է ռիսկայնության գործոնի հետ: Այստեղ, երբեմն, ռիսկայնությունը կարող է դառնալ անկառավարելի: Ռիսկի աստիճանը, ուժային տարբերակի կիրառման ժամանակ, կախված է դրված խնդիրների իրական ծավալներից ու դրանց բարդությունից:

Հարկավոր է ճիշտ գնահատել դրանց բարդության աստիճանը և այդ ճանապարհով խնդրի լուծման տարբերակից իրական օգուտներ ստանալու հնարավորությունները: Հաղթանակը, որը ձեռք է բերվում մեծ կորուստների զնով, ոչ միշտ է ապահովում ակնկալվող արդյունքը: Իսկ պարտությունը նշանակում է բազմաթիվ անդառնալի կորուստներ: Բացի այդ ցանկացած պատերազմի ընթացք նախօրոք անկանխատեսելի է: Այդ պատճառով, ռազմական որոշումներ կայացնող անձիք բազմաթիվ հարցերի շուրջ հայտնվում են երկընտրանքային կամ նաև անելանելի իրավիճակներում:

Նմանատիպ հարցերից կարող են լինել պատերազմի տևողության որոշումը՝ սեփական ռեսուրսներին համապատասխան, պատերազմի տարածման աստիճանը, կորուստների աստիճանը, պատերազմի ավարտից հետո

սեփական երկրի քաղաքական և ռազմական ստատուսի հարցը և այլն:<sup>2</sup> Այս ենթատեքստում, դարաբաղյան խնդրի հետ կապված հարկ է նշել, որ դարաբաղյան զինված ուժերի և աղբրեջանական բանակի միջև շփման 250 կիլոմետրանոց հատվածը ամբողջությամբ իրենից ներկայացնում է երկու էշելոնացված պաշտպանական գծերի մի համալիր: Բացի այդ, անկախ փորձագետների կողմից ԼՂ բանակը համարվում է տարածաշրջանի ամենակազմակերպված ու կարգապահ բանակը: Ցանկացած նոր բախման հետևանքները անկասկած ավելի ծանր կլինեն:

Ուժային լուծումների ընդունման ժամանակ ռիսկը կապված է երաշխիքների բացակայության հետ: Եթե դիվանագիտական հարաբերությունները և նրանց արդյունքում ընդունվող քաղաքական որոշումները հիմնվում են հենց որոշակի փոխադարձ երաշխիքների վրա, որոնք հետագա բանակցությունների ընթացքում ձգտում են ավելի կոնկրետացման, ապա հիմնախնդրի լուծման ուժային տարբերակը գրեթե չի նախատեսում փոխադարձ պարտավորություններ (բացառությամբ գերիների փոխանակումը, կամ որոշ դեպքերում՝ ժամանակավոր հրադադարի ընդունումը): Դրանց նույնպես հասնում են բարդ դիվանագիտական ճանապարհներով, դրա օրինակը նույն դարաբաղյան պատերազմում հրադադարի ստորագրման գործընթացի երկարատևությունն ու չափազանց բարդությունն էր:<sup>3</sup>

Այուս փաստարկը ուժային մեթոդի կիրառման դեմ՝ դա այն է, որ ռազմական գործողությունները անմիջականորեն ենթադրում են դրանց աստիճանական էսկալացիա, որը ռեալ հնարավորություն է ստեղծում, ինչպես նոր ուժերի ներգրավման, այնպես էլ հենց բուն հակամարտության խորացման ու սրման համար: Բացի այդ, ռազմական լուծումը անհամատեղելի է ոչ-ռազմական այլընտրանքային ցանկացած լուծման տարբերակի հետ: Այն ունի իր սեփական զարգացման տրամաբանությունը: Այսինքն հենց սկսվում են ռազմական գործողությունները, կոնֆլիկտը ձեռք է բերում որակապես այլ բնույթ և մի շարք այլընտրանքային լուծման տարբերակներ, որոնք քննարկվել են կողմերի միջև խաղաղ-մինչպատերազմական շրջանում, համարվում են կորսված:

Այսպիսով, եթե խնդրին մոտենանք այն տեսակետից, որ աղբրեջանական կողմը այնուամենայնիվ որոշել է խնդիրը լուծել ուժային ճանապարհով,:

2. Изменяющееся Общество. Конфликт и его разрешение. Ереван 1,2 99, ст.19.

3. Տես նույն տեղում էջ 20:

ապա անտրամաբանական է այդ մասին ամենատարբեր մակարդակներով արվող ռազմատենչ հայտարարությունների, կատարվող քայլերի և իրականության միջև գոյություն ունեցող տարբերությունների առկայությունը:

Պատերազմի վերսկսման մասին հայտարարությունները լսվում են Բաքվի կողմից զինադադարի ստորագրման պահից սկսած և պարբերաբար ավելի ակտիվ բնույթ են ստանում: Եթե դրանք իրական են, ապա ի սկզբանե բանակցությունները կարելի է անհիմաստ համարել: Իսկ եթե ինչ-ինչ նեղ և կարճաժամկետ քաղաքական նպատակներ են հետապնդում, որը ավելի մոտ է իրականությանը, ապա պետք է արձանագրել այն փաստը, որ իրականում դրանք ամեն անգամ իրավիճակի անհարկի սրման պատճառ են հանդիսանում և նոր կոնֆլիկտի առաջացման վտանգ կարող են պարունակել:

Սեկ քան հստակ է. ԼՂ հիմնախնդրի խաղաղ կարգավորումն է այն միակ տարբերակը, որին ձգտում են ինչպես Հայաստանի ու Ղարաբաղի, այնպես էլ Ադրբեջանի հասարակության լայն շրջանակները և իշխանությունները պարտավոր են մինչև վերջ ձգտելու հասնել լուծման այդ տարբերակին:

2. Ադրբեջանի կողմից նման հայտարարություններն ու վարքագիծը ստվեր են գցում երկու երկրների նախագահների միջև խնդրի խաղաղ կարգավորմանն ուղղված ավելի քան 20 հանդիպումների, ինչպես նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի՝ խնդրի խաղաղ ճանապարհով լուծմանն ուղղված միջնորդական գործունեության վրա: Ի վերջո, եթե սկզբունքորեն վճռված է խնդիրը լուծել քաղաքական ճանապարհով և ընդունված է Մինսկի խմբի միջնորդական առաքելությունը, որպես խաղաղ լուծմանը նպաստող միջնորդի, ապա առնվազն կարելի է անտրամաբանական համարել Բաքվի վարքագիծը: Դա կարելի է մեկնաբանել, որպես քաղաքական շահարկումների, քաղաքական դիվիդենտներ կորզելու միջոց (միջազգային հանրությունից, եվրոպական կառույցներից և վերջապես գերտերություններից): Այդ վարքագիծը կարելի է երկիմաստ համարել: Արտաքուստ ընդգրկված լինելով խաղաղ բանակցությունների գործընթացում, տպավորություն է ստեղծվում, թե Բաքուն այնուամենայնիվ հող է նախապատրաստում նաև խնդրի ռազմական լուծման տարբերակի համար և այդ դեպքում հնարավոր է, որ դրան դիմի սեփական անսպասելի նախաձեռնությամբ: Իսկ անկանխատեսելիության թեկուզև թույլ դրսևորումները միայն անվստահության մթնոլորտի լարմանն են նպաստում: Եթե տպավորությունը այնուամենայնիվ սխալ է, ապա Բաքվի վարքը կարելի է բնութագրել որպես էժանագին պոպուլիզմ:

3. Եթե հարցին մոտենանք իրավական տեսանկյունից, ապա Բաքվի կողմից համապատասխան բնույթի հայտարարություններն ու գործելակերպը

կարող են մեկնաբանվել, որպես որոշակի իրավական հետևանքներ առաջացնող քայլեր: Միջազգային հարաբերությունների ժողովրդավարացումն անխուսափելիորեն հանգեցնում է ուժի և ուժով սպառնալիքի ցանկացած կիրառման սահմանափակմանը: Այս օբյեկտիվ օրինաչափությունը, որպես միջազգային իրավունքի սկզբունք, ամրագրվել է ՄԱԿ-ի կանոնադրության մեջ: Այն արտահայտում է ժողովուրդների միջազգային հետպատերազմյան հարաբերությունների արդարացի կարգավորման ժողովրդավարական ձգտումներն ու հույսերը: ՄԱԿ-ի կանոնադրության մեջ ասված է. «Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամները իրենց միջազգային հարաբերություններում ձեռնպահ են մնում ուժով սպառնալիքից կամ այն որպես ցանկացած պետության տարածքային անձեռնմխելիության կամ քաղաքական անկախության դեմ ունեցած միջոց, ինչպես նաև որևէ այլ՝ ՄԱԿ-ի նպատակներին անհարիր ձևով կիրառումից»:<sup>4</sup> Ինչպես Չայաստանը, այնպես էլ Ադրբեջանը հանդիսանում են ՄԱԿ-ի լիիրավ անդամներ, իսկ Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից առաջարկված լուծման 3 տարբերակներից վերջին 2-ում նշված է, որ ԼՂ-ն անպայմանորեն պետք է ունենա հատուկ կարգավիճակ ՄԱԿ-ում:

Դեկտեմբերյան ամփոփիչ ակտում ուղղակիորեն նշված է, որ մասնակից պետությունները պետք է ձեռնպահ մնան այլ մասնակից պետությանը հարկադրման նպատակով ուժի օգտագործումից, պետք է ձեռնպահ մնան ցանկացած տնտեսական հարկադրական գործողությունից: Այդ ամենն անվիճելիորեն վկայում է, որ ժամանակակից միջազգային իրավունքն արգելում է ցանկացած ձևով ուժի գործադրում կամ գործադրման սպառնալիք:<sup>5</sup> Ադրբեջանը և Չայաստանը ԵԱՀԿ անդամներ են հանդիսանում, սակայն 1988թ-ից մինչ օրս չարունակվում է ադրբեջանական կողմից տնտեսական, տրանսպորտային շրջափակումը ԳԳ-ի նկատմամբ: Ավելին, այդ շրջափակումը Ադրբեջանի և նրա դաշնակից Թուրքիայի կողմից դրվում է որպես անհրաժեշտ նախապայման հայկական կողմին որոշակի լուծումներ պարտադրելու համար: Խնդիրը կայանում է նրանում, որ եթե տարածաշրջանին անհրաժեշտ է կայունություն և փոխշահավետ տնտեսական համագործակցություն, և դա բխում է ըստ էության բոլորի շահերից, ապա դրան հասնելու ճանապարհին պետք է ձեռնպահ մնալ սեփական նեղ շահերի հետապնդումից և պետք է պատրաստ լինել ավելի լայն երկխոսության:

4. ՄԱԿ-ի կանոնադրություն, 2-րդ հոդված, 4-րդ կետ:  
5. Միջազգային իրավունք. Երևան, 1996թ. էջ 22:

Ի վերջո ինչպե՞ս է արտահայտվում աղբբեջանական կողմի վերոնշյալ վարքագիծը և ի՞նչ կոնկրետ հայտարարություններ ու քայլեր են կատարվում: Այս ենթատեքստում հատկանշական ենք համարում հատկապես վերջին երկու տարիների լուսաբանումը:

Ինչպես վերը նշվեց արդեն, հայտարարությունները Բաքվի կողմից պարբերական բնույթ են կրում և բնորոշ են ոչ միայն վերջին տարիներին: Դեռևս 2001թ. սեպտեմբերին ՀՀ Ազգային ժողովի խորհրդարանական պատվիրակությունը Եվրո-խորհրդի քարտուղարությանը դիմեց առաջարկ-փաստաթղթով:

Որպես փաստաթուղթ առաջարկն ընդունվեց եւս ԽՎ-ի կողմից 2001թ. հոկտեմբերի 8-ին: Այն կոչվում է «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը Աղբբեջանի կողմից ռազմական ճանապարհով լուծելու դեմ»:<sup>6</sup>

Եւս գլխավոր քարտուղար Վ.Շվիմերի պատասխանը եղավ այն, որ ՀՀ-ն և Աղբբեջանը Եւս-ին անդամակցելիս պարտավորվել են ԼՂ խնդիրը լուծել բացառապես խաղաղ ճանապարհով և պարտավոր են խստով կերպով հետևել դրան: Երկու երկրները անդամակցում են Եւս-ին 2001թ-ի հունվարին միաժամանակ նրա կազմի մեջ մտնելով և ցանկացած նոր կոնֆլիկտածին իրավիճակի ստեղծումը ուղղակիորեն հակասում է այդ կառույցի սկզբունքներին:

2002թ-ը հատկանշական է թե՛ աղբբեջանական իշխանությունների, թե՛ հատկապես ընդդիմության գործիչների կողմից արված ռազմատենչ հայտարարությունների առումով: Սակայն 2003թ-ը այդ տեսակետից մեծապես գերազանցել է նախորդ տարվան:

2003թ-ն Աղբբեջանի և Պակիստանի միջև կնքվեց ռազմական ուղրտում համագործակցության մասին համաձայնագիր: Ապրիլի 11-ն կնքված համաձայնագրին հաջորդած մամուլի ասուլիսում կողմերը հանդես եկան հետևյալ հայտարարություններով. «Աղբբեջան-Պակիստան համագործակցությունը հաջող է զարգանում: Պակիստանը տեղեկացված է Ղարաբաղի և Աղբբեջանի այլ հիմնախնդիրների մասին:

Սեր նախագահը, կառավարությունը և ժողովուրդը կօգնեն Աղբբեջանին ազատագրելու իր հողերը հայ ազրեսորներից» ասաց Պակիստանի պաշտպանության ազգային կոմիտեի նախագահ Շահիդ Նավազը: Աղբբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիևը շնորհակալություն հայտնեց Պակիստանին աջակցության համար և նշեց, որ ռազմական համագործակցությունը երկու երկրների միջև կզարգանա: «Աղբբեջանը վերադարձել է

6. PACE. Document N 9257. October 8, 2001.

Ղարաբաղի խնդրի լուծման խաղաղ կարգավորման տարբերակին, Հայաստանը չի հասկացել դա և մենք օգտագործելու ենք մեր իրավունքը՝ ազատագրելու մեր տարածքները»,- նշել է նախարարը:<sup>7</sup> Այն պայմաններում, երբ Ղարաբաղի խնդրի կարգավորումը իրականացվում է եվրոպական հեղինակավոր կառույցի կողմից, նման բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարություններն ու քայլերը ամենաքիչը մտահոգվելու առիթ են տալիս և սրում են երկուստեք առանց այդ էլ լարված հոգեբանական մթնոլորտը: Այդ գործում հաջողված քայլ կարելի է համարել նաև վերջին իրադարձություններից այն, որ հայկական պատվիրակությունը ի վերջո չմասնակցեց Բաքվում կայացած խորհրդաժողովին՝ նվիրված 2004-ին Ադրբեջանում անցկացվելիք ՆԱՏՕ-ի զորավարժությունների պլանավորմանը: Բաքվում ամենատարբեր մակարդակներով հնչեց այն միտքը թե հայ սպաների ներկայությունը կարող է հասարակության մեջ դժգոհություն առաջացնել և, որ հնարավոր չի լինի ապահովել վերջիններիս անվտանգությունը:

2003թ-ի աշնանը Ադրբեջանում կայացած նախագահական ընտրությունների քարոզարշավը հատկապես լի էր պատերազմի վերսկսման մասին հայտարարություններով:

Եթե նման հայտարարությունները կարելի էր սպասել, օրինակ, ազգայնական «Ազգային անկախություն կուսակցության» առաջնորդ Էթիբար Մամեդովից կամ ծայրահեղական «Ումիդ» («Հույս») կուսակցության առաջնորդ Իկրալ Աղազադեից, ապա այն ժամանակ նախագահի թեկնածու Իլհամ Ալիևի կողմից արված առնվազն երկու նմանատիպ հայտարարությունները<sup>8</sup> կարելի է ենթադրել, որ իրենց հնարավոր հետևանքները կարող են ունենալ ներկա նախագահ Ի.Ալիևի քաղաքականության մեջ:

Պետք է նշել, որ նույն 2003-ին Հայաստանում անցկացված նախագահական քարոզարշավի ժամանակ ոչ ընդդիմության գործիչները, ոչ նախագահի թեկնածուները և ոչ էլ ներկայիս նախագահ Ռ.Քոչարյանը՝ Ադրբեջանին ուժային որևէ միջոցով հակադարձնելու հայտարարություն չեն արել:

Հայաստանի պաշտոնական դիրքորոշումը արտահայտել է պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը. «Ով առաջինը պատերազմը սկսի մա կպարտվի: Հայկական բանակը պատրաստ է դիմագրավելու ցանկացած վտանգ»:<sup>9</sup> Ղարաբաղի իշխանությունները ավելի զգուշավոր են վերաբերվում

7. Baku Today: April 11, 2003.

8. Baku today: September-October 2003

9. «Հայաստանի Հանրապետություն» շաբաթաթերթ, սեպտեմբեր 2003թ.

նման հայտարարություններին: Նախագահ Արկարդի Դուկասյանը հայտարարել է. «Ցավոք սրտի, մենք միշտ պատրաստ ենք պատերազմին: Երաշխիքներ չկան, որ վաղը այն չի կարող չվերսկսվել»:<sup>10</sup> Հարկ է նշել Ա.Դուկասյանի մեկ այլ միտք, որը նա արտահայտել է ԵԱԴԿ Մինսկի խմբի համանախագահների հետ վերջին հանդիպման ընթացքում, որը տեղի ունեցավ 2003թ-ի դեկտեմբերի 5-ին. «Անչափ կարևոր է, որպեսզի վերջ տրվի գաղափարախոսական պատերազմին»:

Ինչպես ցույց են տալիս վերջին տարիների իրադարձությունները, ուժային գերակայության ամկայությունը հաճախ է առաջնային դառնում, չնայած ժամանակակից դիվանագիտության բարձր մակարդակին: Իհարկե նման լուծումներին առաջնայնություն տալը երբեմն ունի ժամանակավոր քաղաքական, առավել հաճախ ներքաղաքական, որոշ խնդիրներ լուծելու նպատակ.

- Նախ, համապատասխան իրավիճակում այն հասարակությանը համախմբելու միջոց է:
- Այն հասարակության ուշադրությունը չլուծված խնդիրներից շեղելու միջոց է:

Դրա ապացույցներից մեկը կարող է հանդիսանալ ՌԴ նախագահ Վ.Պուտինի հեղինակության կտրուկ վերելքը 1999թ-ին Չեչնիայում վճռականորեն ռազմական նոր կամպանիա սկսելու ընթացքում: Դա նաև ռուս հասարակության ուշադրության շեղումն էր ներքաղաքական այլ խնդիրներից:

Ինչ վերաբերում ԼՂ հիմնահարցին, ապա կարելի է հաստատապես ասել, որ վերջին 14 տարիների ընթացքում բազմաթիվ պատերազմներ տեսած Հարավային Կովկասում նոր պատերազմի հետևանքները անկանխատեսելի և չափազանց ծանր կլինեն: Լեռնային Ղարաբաղի հակամարտության բոլոր կողմերը պետք է մեծ զգուշությամբ վերաբերվեն արդեն 10 տարի ձգվող, ինքնավերահսկվող հրադադարին և պետք է ամեն կերպ նպաստեն հրադադարի ռեժիմի պահպանմանն ու խնդրի խաղաղ կարգավորմանը: Ցանկացած անզգույշ գործողություն և հայտարարություն կարող են նոր ճգնաժամեր առաջացնել և կոնֆլիկտի էսկալացիայի առիթ հանդիսանալ:

10. «Малые войны и Большая игра» В.Четерян, Ереван 2003, ст.